



**VEOLIA**  
Զուր

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ



ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓԵՏՐՎԱՐ 2019




 **VEOLIA**  
Զուր



<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում .....	13
1.3. Ջրահեռացման համակարգ .....	14
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	15
1.5. Էներգահամակարգ .....	16
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	19
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>20</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	21
2.2. Հասույթ .....	21
2.3. Գանձում .....	24
2.4. Դեբիտորական պարտքեր .....	24
2.5. Ջրաչափեր .....	26
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ....	27
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>28</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	29
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	31
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	33
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ .....	34
3.5. Ջրատար համակարգի բարելավում .....	36
<b>4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>40</b>
4.1. Համակարգչային ցանց .....	41
4.2. Ինտերակտիվ համակարգ .....	41
<b>5. Լրատվական ծառայություն</b> .....	<b>42</b>
<b>6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>45</b>
6.1. Փաստաթղթերի մշակում .....	46
6.2. Դասընթացներ /սեմինարներ .....	46
6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում .....	47

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 1.1 ՋՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Երևան

● Լենինգրադյան փողոցի 2 և 4 շենքերի միջնամասով անցնող  $D=300$  մմ պողպատե խողովակը վթարային վիճակում էր: Այն փոխարինելու նպատակով ներարկվել է  $D=63$  մմ  $L=70$  գծմ պոլիէթիլենային խողովակ: Արդյունքում բարելավվել է շենքերի ջրամատակարարումը, նվազել գաղտնի վթարների հավանականությունը: Խնայվել է  $Q=1$  լ/վ ջրաքանակ:



Լենինգրադյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Դավթաշեն Ներքին ՕԿՋ-ի ջրամատակարարման սխեմա

● Դավթաշեն Ներքին ՕԿՋ-ի տարածքում խցափակման միջոցով շահագործումից հանվել է  $D=100$  մմ  $L=120$  գծմ վթարային խողովակ, ինչի արդյունքում խնայվել է  $Q=2$  լ/վ ջրաքանակ:

● Մերձավան համայնքի Մարքսի 4-րդ դպրոցի մոտ  $D=100$  մմ  $L=20$  գծմ վթարային թուջե խողովակը փոխարինվել է  $D=63$  մմ  $L=20$  գծմ նոր պոլիէթիլենային խողովակով, ինչի արդյունքում բարձրացել է ջրի ճնշումը և կարգավորվել ջրամատակարարումը:



Մերձավան համայնքի ջրամատակարարման սխեմա



Փարաքար համայնքի ջրամատակարարման սխեմա

● Փարաքար համայնքի մայրաքաղաքային 101 հասցեում խցափակման միջոցով շահագործումից հանվել է  $D=50$  մմ  $L=55$  գծմ վթարային խողովակ: Աշխատանքներից հետո կարգավորվել է նշված փողոցի ջրամատակարարումը և խնայվել է  $Q=3$  լ/վ ջրաքանակ:

● Գրիբոյեդով 5 շենքի մոտակայքում հաճախ էին վթարներ արձանագրվում: Տեղի ուսումնասիրությունների արդյունքում ներարկման միջոցով փոխարինվել է  $D=150$  մմ  $L=30$  գծմ վթարային ջրագիծը նոր՝  $D=63$  մմ  $L=30$  գծմ խողովակով, ինչի արդյունքում նվազել է գաղտնի վթարների հավանականությունը:



Գրիբոյեդով փողոցի ջրամատակարարման սխեմա



Ավագ Պետրոսյան փողոցի վթար

● Ավագ Պետրոսյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է  $D=50$  մմ ջրագծի ճեղքի զոդման միջոցով վերացվել է գաղտնի վթար, որի արդյունքում խնայվել է մոտ  $Q=0.5$  լ/վ ջրաքանակ:



● Աշխատանքներ են իրականացվել նաև Մ. Խորենացու փողոց 4 հասցեում և Մ. Խորենացու և Զաքյան փողոցների խաչմերուկում, որտեղ  $D=50$  մմ և  $D=150$  մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և անցքերի փակման և ճեղքերի զոդման միջոցով վերացվել է 4 վթար: Արդյունքում խնայվել է մոտ  $Q=2.5$  լ/վ ջրաքանակ:



● Սարի Թաղ 18 փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է  $D=150$  մմ ջրագծի ճեղքերի զոդման միջոցով վերացվել է 3 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ  $Q=1.0$  լ/վ ջրաքանակ:

Վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Էրեբունի փողոց 7 շենքի բակում հայտնաբերվել է  $D=100$  մմ ջրագծի խցափակման միջոցով վերացվել է վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ  $Q=2.0$  լ/վ ջրաքանակ:

## Քաղաք Գյումրի

● Շչեդրին 7 շենքի բակում վթար էր գրանցվել: Գոտիավորման խմբի կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ պատճառը դեռևս առկա հին խողովակաշարն էր, որը նախկինում սնուցել է Շչեդրին փողոցի հարակից տները: Նախկին ջրամատակարար կազմակերպությունների կողմից այս թաղամասում ցանցն ամբողջությամբ փոխարինվել էր, սակայն հին խողովակաշարը շահագործումից դուրս չէր բերվել: Միացման տեղից  $D=150$  մ  $L=150$  մ ջրագիծը շահագործումից հանելուց հետո խնայվեց մոտ  $Q=2$  լ/վրկ ջրաքանակ:



Շչեդրին փողոցի ջրամատակարարման սխեմա



Ալավերդյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Սելեկցիոն կայանից դեպի Ե/Գ ավանի հյուսիսային հատվածով անցնող  $D=200$  մ  $L=2000$  մ թուջե խողովակը, որտեղից ոչ մի բնակիչ-բաժանորդ չէր սնուցվում, խցափակման եղանակով շահագործումից հանվեց բարելավելով տարածքի բաժանորդների ջրամատակարարումը և խնայելով  $Q=2.0$  լ/վ ջրաքանակ:



Սելեկցիոն կայանի ջրամատակարարման սխեմա



Տ. Մեծի 53 և 55 շենքերի ջրամատակարարման սխեմա

● Տ. Մեծի պողոտայի 53 և 55 շենքերի մուտքագծերը կառուցվել են նախորդ դարի կեսերին: Այստեղ հաճախակի կրկնվող վթարներից խուսափելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել շենքերի մուտքային ջրագծերը  $D=20$  մ  $L=14$  գծմ,  $D=25$  մ  $L=15$  գծմ,  $D=32$  մ  $L=10$  գծմ,  $D=50$  մ  $L=12$  գծմ և շահագործումից հանել  $D=50$  մ  $L=47$  գծմ խողովակ: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=1.0$  լ/վրկ ջրաքանակ:

● Տարն 4 թաղամասի քոթեջների մուտքային ջրագծերը ամբողջովին քայքայված էին ու հնամաշ, ինչի արդյունքում հաճախ էին այստեղ վթարներ գրանցվում:  $D=30$  մմ  $L=18$  գծմ փոխարինելուց հետո կարգավորվեց տեղի ջրամատակարարումը և ցանցի ճնշումը:



Տարն 4 թաղ. քոթեջների ջրամատակարարման սխեմա

### Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում Կալինինի փողոցում  $D=50$  մմ պողպատե քայքայված ջրագծի  $L=6$  գծ/մ երկարությամբ հատվածը փոխարինվել է պոլիէթիլենային խողովակներով, ինչի արդյունքում խնայվել է  $Q=5$  լ/վ ջրաքանակ:

Վթարադրոնողական աշխատանքներ են իրականացվել նաև Շահումյան փողոց 28 շենքի մոտ և  $D=150$  մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել և ձեռքի գողման միջոցով վերացվել է թվով 5 վթար: Փոխարինվել է  $D=150$  մմ քայքայված պողպատե խողովակի  $L=10$  գծ/մ երկարությամբ հատվածը, տեղադրվել են  $D=150$  մմ և  $D=100$  մմ փականներ և  $D=110$  մմ  $L=16$  գծ/մ ջրթափ խողովակներ: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ  $Q=5$  լ/վ ջրաքանակ:

### Քաղաք Իջևան



Գետափնյա ՕԿՁ-ի ջրամատակարարման սխեմա

● Գետափնյա ՕԿՁ-ից դուրս եկող  $D=150$  մմ պողպատե խողովակի որոշ հատված քայքայված էր և ոչ պիտանի հետագա շահագործման համար:  $D=150$  մմ  $L=15$ գծմ հատվածը նոր պողպատե խողովակով փոխարինելու շնորհիվ խնայվել է  $Q=0.8$  լ/վ ջրաքանակ:

### Քաղաք Սևան

● Սևան քաղաքի Նաիրյան փողոց 181 շենքում իրականացվել են ջրագծերի փոխարինման աշխատանքներ, շահագործումից հանվել են  $D=57-108$  մմ  $L=270$  գծ/մ երկարության քայքայված պողպատե խողովակներ և տեղադրվել են  $D=20-32$  մմ  $L=101.8$  գծ/մ երկարության պոլիէթիլենային խողովակներ: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=5.0$  լ/վ ջրաքանակ:

### Նոր Գյուղ համայնք

● Համայնքի նախկին փորձագիտական կենտրոնի հարևանությամբ շահագործումից հանվել է  $D=150$  մմ  $L=200$  մ ջրագիծ, ինչի արդյունքում ցանցում կարգավորվել է ջրի ճնշումները: Իսկ 1-ին ՕԿՁ-ից համայնքի Աղվաններ թաղամասը սնուցող վթարային ջրագծի  $D=100-150$  մմ հատվածը շահագործումից դուրս բերելու արդյունքում խնայվել է  $Q=1$  լ/վ ջրաքանակ:



Նոր Գյուղ համայնքի ջրամատակարարման սխեմա



## Ձորագյուղ համայնք



Ձորագյուղ համայնքի ջրամատակարարման սխեմա

- Համայնքի 8-րդ փողոցում պարբերաբար կրկնվող վթարների պատճառով անհրաժեշտ եղավ փոխարինել քայքայված՝  $D=133$  մմ  $L=15$  գծմ խողովակաշարը, ինչի շնորհիվ նվազեց հետագա վթարների առաջացման հավանականությունը և կարգավորվեց տեղի ջրամատակարարումը:

## Վահագնի համայնք

- Գյուղի դպրոցի մոտակայքում քայքայված  $D=50$  մմ ջրագծի հատվածը փոխարինելու արդյունքում դպրոցի ջրամատակարարումը դարձավ ավելի հուսալի:



Վահագնի համայնքի ջրամատակարարման սխեմա

## Գուգարք համայնք



Գուգարք համայնքի ջրամատակարարման սխեմա

- Համայնքի 6-րդ փողոցը սնուցող ջրագծի հաճախակի կրկնվող գաղտնի վթարներից խուսափելու նպատակով փոխարինվեց վթարված  $D=89$  մմ խողովակ հատվածը, ինչի արդյունքում խնայվել է  $Q=0.5$  լ/վրկ ջրաքանակ:

## Արևշատ համայնք

- Արևշատ համայնքի Մխչյան փողոցի  $D=75$  մմ  $L=810$  գծ/մ և Թումանյան փողոցի  $D=75$  մմ  $L=630$  գծ/մ երկարության վթարային վիճակում գտնվող պողպատյա խողովակներն ամբողջովին քայքայված էին, ինչն էլ հանգեցնում էր հաճախակի վթարների, ջրակորուստի և հետագա շահագործման անհնարինությանը:

- Փոխարինվել են համայնքի դպրոցի և մանկապարտեզի հին ջրագծերը՝ Արևշատ համայնքի կողմից տրամադրված  $D=50-63$  մմ  $L=310$  գծ/մ երկարության խողովակներով:

Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը



- «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից Արնշատ համայնքի Մխչյան և Թումանյան փողոցների կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են  $D=32-160$  մմ  $L=1270$  գծ/մ պոլիէթիլենային խողովակներով,  $D=50$  մմ և  $D=100$  մմ խողովակների վրա ճեղքի գոդման միջոցով վերացվել է 2 վթար, իսկ  $D=75$  մմ պոլիէթիլենային խողովակի վրա առկա վթարը վերացվել է համապատասխան դետալներով:



### Վերին Արտաշատ համայնք

- Վերին Արտաշատում  $D=20$  մմ վթարված պոլիէթիլենային խողովակի  $L=4$  գծ/մ հատվածը փոխարինվել է նոր խողովակներով:

### Նորաշեն համայնք

- Նորաշեն համայնքում  $D=160$  մմ պոլիէթիլենային խողովակի վրա տեղադրվել է գոտի միացում՝ առկա գաղտնի վթարը վերացնելու համար, ինչպես նաև գյուղի դաշտերի միջով անցնող  $D=100$  մմ պողոպատե խողովակի վթարը վերացվել է ճեղքի գոդման միջոցով:

### Մխչյան համայնք


- Մխչյան գյուղում  $D=75$  մմ պողպատե ջրագծի անցքերի փակման միջոցով վերացվել է թվով 3 վթար: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=12.5$  լ/վ ջրաքանակ:

### Մարմարաշեն և Ջրահովիտ համայնքներ

- «Մասիս» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մարմարաշեն և Ջրահովիտ գյուղերում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում  $D=90$  մմ և  $D=75$  մմ ջրագծի վրա հայտնաբերվել և թմբակի տեղադրման միջոցով վերացվել է թվով 2 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ  $Q=9$  լ/վ ջրաքանակ:

### Ակնալիճ և Բաղրամյան համայնքներ

- Ակնալիճ և Բաղրամյան գյուղերում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է թվով 3 վթար և  $D=150$  մմ,  $D=90$  մմ և  $D=75$  մմ ջրագծերի վրա առկա վթարների վերացման արդյունքում խնայվել է մոտ  $Q=5$  լ/վ ջրաքանակ:



Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարած աշխատանքները հակիրճ նկարագրվում են ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1,559
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	23,745
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	16,160
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2,280
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	66
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3,216
Կառուցված ջրագիծ	մ	3,102
Կառուցված կոյուղագիծ	մ	144
Վերացված գաղտնի վթարներ	հատ	60
Փոխարինված փական	հատ	215
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	701
Մաքրված դիտահոր	հատ	4,484
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	93
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1,455
Ջրահեռացման ցանցում	հատ	3,810
Պոմպակայաններում	հատ	152
Մաքրված անձրևընդունիչ	հատ	340

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	4	47	0
2	Զեյթուն	3	41	0
3	Մաշտոց	0	22	0
4	Շահումյան	1	49	0
5	Ալավերդի	16	30	0
6	Բերդ	7	10	0
7	Նոյեմբերյան	11	8	0
8	Իջևան	10	21	0
9	Ստեփանավան	5	19	0
10	Տաշիր	9	6	0
11	Ապարան	5	17	0
12	Լոռի	36	54	0
13	Շիրակ	40	55	0
14	Արթիկ	17	8	0
15	Սպիտակ	0	39	0
16	Թալին	3	9	0
17	Աշոցք	1	22	0
18	Էջմիածին	13	29	0
19	Աշտարակ	13	19	0
20	Հրազդան	8	9	0
21	Զարենցավան	7	12	0
22	Աբովյան	3	7	0
23	Կենտրոն	1	62	10
24	Հյուսիս	1	22	46
25	Հարավ	8	33	20
26	Էրեբունի	6	69	9
27	Արմավիր	8	57	27
28	Արտաշատ	81	69	30
29	Արարատ	28	39	35
30	Մասիս	49	20	32
31	Գավառ	5	6	46
32	Սևան	4	5	6
33	Մարտունի	0	5	8
34	Վարդենիս	0	7	3
35	Ճամբարակ	0	1	0
36	Դիլիջան	8	20	20
37	Վայք	1	6	14
38	Եղեգնաձոր	4	8	23
39	Զերմուկ	0	1	1
40	Սիսիան	6	14	28
41	Գորիս	4	8	15
42	Կապան	15	25	27
43	Մեղրի	4	0	8
	Ընդամենը	445	1010	408

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում գրանցված 1,863 վթարների 24 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 76 %-ը՝ մարզերին, ընդ որում

- Երևանում գրանցված 369 վթարների (ընդհանուրի 20 %) 7 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 93 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:
- մարզերում գրանցված 1,086 վթարների (ընդհանուրի 80 %) 39 %-ը կազմում են պոլիէթիլենային, իսկ 61 %-ը՝ մետաղական խողովակների վրա տեղի ունեցած վթարները:



## 1.2. ՋՐԱԶԱՓԵՐԻ ՓՈՒՆԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3՝ Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ								
	15	20	25	32	40	50	65	80	Ընդամենը
Տեղադրված	202	19	6	7	3	5	2	0	244
Փոխարինված	325	18	4	1	1	4	0	2	355
Տեղափոխված	17	0	1	0	0	0	0	0	18
Տեխ. Ակտ	57	24	2	0	0	0	0	0	83
Ընդամենը	601	61	13	8	4	9	2	2	700

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-80 մմ տրամաչափի 700 ջրաչափ: Կատարված աշխատանքների 86 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:


### 1.3. ԶՐԱՋԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում հատ
1	Արաբկիր	1,690	224	24
2	Մաշտոց	2,210	207	33
3	Շահումյան	2,020	172	17
4	Զեյթուն	770	187	10
5	Շիրակ	450	407	0
6	Ալավերդի	1,370	91	24
7	Ապարան	0	28	0
8	Արթիկ	0	66	0
9	Աշոցք	4	7	0
10	Բերդ	120	12	0
11	Իջևան	1,055	50	0
12	Լոռի	2,665	217	0
13	Նոյեմբերյան	0	29	0
14	Սպիտակ	50	22	0
15	Ստեփանավան	1,110	13	0
16	Թալին	0	14	0
17	Տաշիր	240	8	0
18	Էջմիածին	225	128	0
19	Չարենցավան	1,440	62	0
20	Արովյան	1,750	72	0
21	Հրազդան	1,800	138	6
22	Աշտարակ	2,045	25	0
23	Կենտրոն	320	274	0
24	Հյուսիս	600	218	0
25	Հարավ	310	331	0
26	Էրեբունի	80	145	12
27	Արմավիր	1,070	81	0
28	Արտաշատ	300	78	0
29	Արարատ	200	52	0
30	Մասիս	240	46	0
31	Գավառ	0	43	0
32	Սևան	600	69	0
33	Մարտունի	0	17	0
34	Վարդենիս	0	9	0
35	Ճամբարակ	185	18	0
36	Դիլիջան	650	29	18
37	Վայք	115	17	0
38	Եղեգնաձոր	60	9	0
39	Ջերմուկ	0	26	0
40	Սիսիան	895	96	0
41	Գորիս	0	26	0
42	Կապան	100	77	0
43	Մեղրի	0	40	0
	Ընդամենը	26,739	3,880	144

Վերոնշյալ աղյուսակը ցույց է տալիս, որ հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ կատարված աշխատանքների 32 %-ը վերաբերում է Երևանին, իսկ 68 %-ը՝ մարզերին:



#### 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Վարդենիսի ԿՊ-ը ենթակայանի բարձր լարման ապահովիչը փասավել էր քամիների պատճառով, ինչի հետևանքով մեկ ֆազը չէր հասնում պոմպակայան: Բաժնի աշխատակիցների կողմից փասաված ապահովիչը փոխարինվել է և պոմպակայանի անխափան աշխատանքը վերականգնվել է:

- Սևան N3 և N5 ԿՊ-ում կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են պոմպերը և նրանց էլեկտրական վահանակները, մաքրվել են աղբից խցանված հակադարձ փականները: Սևան N5 ԿՊ-ի գամբյուղի բարձրացման համար նախատեսված ձեռքի՝ շարքից դուրս եկած և իր հենակներից պոկված ճախարակը վերանորոգվել և տեղադրվել է:


- Ջերմուկ ԿՄԿ-ի արտադրական մասնաշենքի թվով 3 էլեկտրական դարպասները չէին աշխատում, ինչի հետևանքով աղբի կոնտեյներները հնարավոր չէր դուրս հանել: Դարպասները վերանորոգվել են և այժմ աշխատում են անթերի: Ստուգվել և կարգաբերվել են նաև բոլոր սարքավորումները:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ: Ստորև Աղյուսակ 5-ում ներկայացված են մանրամասներ:



Աղյուսակ 5՝ Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Գառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	65,106	30.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	74,418	14.4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	187,945	3.6
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	122,269	9.5
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	128,954	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16,798	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	5,373	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	10,900	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	21,000	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0



## 1.5. ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:


Աղյուսակ 6՝ Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Հ.Քոչար 13	Ֆազի բացակայության ռելե էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում, խցուկի տեղադրում
2	մ. Կոտայք, գ. Վերին Աղբյուրակ	էլ. սարքերի զննում կարգավորում
3	Գյուլբենկյանի 44 - 38	Պոմպի աշխատանքի կարգավորում
4	Արդույթյան 29	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Ազատության 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
6	Լենինգրադյան 52 - 39	Պոմպի աշխատանքի կարգավորում
7	Գ. Պոռոջյան 5փ	էլ. սարքերի զննում կարգավորում, թողարկիչի տեղադրում
8	Սունդուկյանի 15/4- 36	Պոմպի աշխատանքի կարգավորում
9	Հակոբյանի 1 - 110	Պոմպի աշխատանքի կարգավորում
10	Վաղարշյան 24/1 Շ ԲՆ 57	Պոմպի աշխատանքի կարգավորում, բարձր ճնշման ռելեի փոխարինում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
11	Ֆրրիկի 2 և 4 շ.շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
12	Ա. Ավետիսյան 67	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում, թողարկիչի տեղադրում, թողարկիչի տեղադրում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
13	Արաբկիր 39Փ 9Տ	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, մեմբրանի տեղադրում, ցածր ճնշման ռելեի փոխարինում
14	Զովունի 9Փ 125Շ - 10	Պոմպի աշխատանքի կարգավորում
15	Դրոյի 28	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում, ցածր ճնշման ռելեի փոխարինում
16	մ. Լոռի, Թեղուտի պոմպակայան	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, Պոմպի աշխատանքի կարգավորում
17	Քանաքեռ 14փող. 44շենք	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
18	Գյուլբենկյանի 43 - 132	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, առանցքակալի տեղադրում
19	Դրոյի 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
20	Ռուբինյանց 23/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
21	Գյուլբենկյան 46	առանցքակալի տեղադրում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, պոմպի վերանորոգում, վերանորոգման հավաքածուի տեղադրում
22	Ն. Զարյան 3	Պոմպի աշխատանքի կարգավորում
23	Հակոբյան 7,9	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Հակոբյան 12	Պոմպի աշխատանքի կարգավորում
25	Ն. Դուման 53	Պոմպի աշխատանքի կարգավորում
26	Ռուբինյանց 23/1 - 49	պոմպի ապամոնտաժում, պոմպի տեղադրում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում
27	Կոմիտասի 45/1 - 61	փականի տեղադրում, բարձր ճնշման ռելեի փոխարինում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
28	մ. Լոռի ք. Սպիտակ Տոխուլաշեն	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, Պոմպի աշխատանքի կարգավորում
29	Սամիկոնյանց 47/1 - 56 (Վրացական 4նրբ.7շ.)	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բարձր ճնշման ռելեի փոխարինում, մեմբրանի տեղադրում
30	Կոմիտասի 49/4	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, մեմբրանի տեղադրում, էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում



h/h	Պոստալային հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
31	Ա.Տիգրանյան 32	Պոստալային աշխատանքի կարգավորում
32	Գ.Սարչապետ	Պոստալային աշխատանքի կարգավորում
33	Կուրդիյան 21/2 - 43	Պոստալային աշխատանքի կարգավորում
34	Ա.Տիգրանյան 5/1 շենք	Պոստալային աշխատանքի կարգավորում, խցուկի տեղադրում, առանցքակալի տեղադրում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
35	Ա.Տիգրանյան 42	Պոստալային աշխատանքի կարգավորում, խցուկի տեղադրում, առանցքակալի տեղադրում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
36	Վ. Համբարձումյանի 97 - 88	Պոստալային աշխատանքի կարգավորում
37	Կուրդիյան 46 - 62	Պոստալային աշխատանքի կարգավորում
38	Հալաբյանի 38 - 55	Պոստալային աշխատանքի կարգավորում
39	Շահումյանյան 8	Պոստալային աշխատանքի կարգավորում
40	Կուրդիյան 49/4 - 410	Պոստալային աշխատանքի կարգավորում
41	Շիրվանզադե 24/1 - 31	Պոստալային աշխատանքի կարգավորում
42	Բաբայան 34	Պոստալային աշխատանքի կարգավորում
43	Գյուլբենկյան 39Ա	Պոստալային աշխատանքի կարգավորում
44	Դավթաշեն վերին ՕԿՁ	Էլ. սարքերի զննում կարգավորում
45	Կուրդիյան 58 - 21	Պոստալային աշխատանքի կարգավորում
46	Աղբյուր Սերբի 11/2 - 4	Թողարկչի տեղադրում, խցուկի տեղադրում
47	մ. Կոտայք գ.Սոլակ	պոստալային տեղադրում
48	Կուրդիյան 48/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
49	Վաղարշյան 24/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
50	Կուրդիյան 2	Պոստալային աշխատանքի կարգավորում
51	ք.Էջմիածին Շահումյան 46	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, փականի տեղադրում
52	Ազատության 12	Պոստալային աշխատանքի կարգավորում
53	Սամիկոյանց 49/1 - 55 (Վրացական 4նրբ.7շ.)	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, բաքի միացման դետալներ
54	Թբիլիսյան խճ.1.2շշ	Պոստալային աշխատանքի կարգավորում
55	Սարկավազ 72	Պոստալային աշխատանքի կարգավորում
56	Լենինգրադյան 48/2 - 23	Պոստալային աշխատանքի կարգավորում
57	Թբիլիսյան խճուղի 35/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
58	Ազատության 3/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
59	մ. Կոտայք,գ.Ակունքի հոսքաչափի	Էլ. սարքերի զննում կարգավորում
60	Կուրդիյան 42	Պոստալային աշխատանքի կարգավորում
61	Կուրդիյան 48/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
62	Կուրդիյան 50	Պոստալային աշխատանքի կարգավորում
63	Կուրդիյան 46 - 13	Պոստալային աշխատանքի կարգավորում
64	Բաշինիջադյան 1նրբ. 2շենք	Պոստալային աշխատանքի կարգավորում
65	Մարգարյան 2նրբ. 12 շենք	Պոստալային աշխատանքի կարգավորում
66	Գյուլբենկյան 2/1	Պոստալային աշխատանքի կարգավորում
67	Սոսե 2նրբ 8շ	Պոստալային աշխատանքի կարգավորում
68	Զեյթուն 8փ	Պոստալային աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի զննում կարգավորում
69	Սուրենյան 3	Պոստալային աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի զննում կարգավորում
70	գյուղ Կոշ	Պոստալային աշխատանքի կարգավորում, էլ. սարքերի զննում կարգավորում
71	ք. Վանաձոր, Նովոսելցովո ջրամբար	պոստալային տեղադրում
72	Զ. Անդրանիկի թաղամաս 10/1 - 39	փականի տեղադրում, եռաֆազ թողարկչի փոխարինում, առանցքակալի տեղադրում, բարձր ճնշման ռելեի նորոգում, շարժիչի փոխարինում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
73	Գյուլբենկյան 2/1	բարձր ճնշման ռելեի փոխարինում, ջերմային ռելեյի տեղադրում, ավտոմատիկայի կառավարիչ, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
74	մ. Կոտայք ք.Բյուրեղավան	Էլ. սարքերի զննում կարգավորում
75	Գր Արծրունի 90 - 53	Պոստալային աշխատանքի կարգավորում, աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից
76	Գր Արծրունի 92-52	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, եռաֆազ թողարկչի փոխարինում, բարձր ճնշման ռելեի փոխարինում, ավտոմատիկայի կառավարիչ
77	Բարբյուս 67 - 34	Պոստալային աշխատանքի կարգավորում
78	Գր Արծրունի 88 - 55	Պոստալային աշխատանքի կարգավորում
79	մ. Կոտայք ք.Բյուրեղավան	պոստալային ապամոնտաժում
80	մ. Կոտայք, ք.Եղվարդ Սոււզայիթ թաղամաս	Պոստալային աշխատանքի կարգավորում
81	ք.Եղվարդ պոստալային	Պոստալային աշխատանքի կարգավորում
82	Էմինի 80	Պոստալային աշխատանքի կարգավորում
83	Գյուլբենկյան 44,46	Պոստալային աշխատանքի կարգավորում
84	Հակոբյան 12	Պոստալային աշխատանքի կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
85	Կոմիտաս 1	Պումպի աշխատանքի կարգավորում
86	Սամիկոնյանց 26/1	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, եռաֆազ թողարկչի փոխարինում
87	Կիևյան 2/4	Պումպի աշխատանքի կարգավորում
88	Օրբելի 63/1	Պումպի աշխատանքի կարգավորում
89	մ.Լոռի ք.Ստեփանավանի պումպակայան	Պումպի աշխատանքի կարգավորում
90	մ.Լոռի, ք. Վանաձորի պումպակայան	Պումպի աշխատանքի կարգավորում
91	Քանաքեռ ՀԷԿ Պ/Կ	Պումպի աշխատանքի կարգավորում
92	Ադոնց 13	Պումպի աշխատանքի կարգավորում
93	մ.Լոռի ք.Սպիտակ Գերմանական թաղ.	պումպի տեղադրում
94	Գյուլբենկյան 34/1 - 38	Պումպի աշխատանքի կարգավորում
95	Մարգարյան 7	Պումպի աշխատանքի կարգավորում
96	Սեբաստիա 18	Պումպի աշխատանքի կարգավորում
97	Օրբելի 18-32	առանցքակալի տեղադրում,վերանորոգման հավաքածուի տեղադրում, մեմբրանի տեղադրում
98	Օրբելի 18	Պումպի աշխատանքի կարգավորում
99	Քանաքեռ ՀԷԿ Պ/Կ	Պումպի աշխատանքի կարգավորում
100	Փափազյան 11	Պումպի աշխատանքի կարգավորում
101	մ.Լոռի ք.Ստեփանավանի «Օքսֆամ» պումպակայան	աշխատանքները կատարվել են Հորիզոն ՍՊԸ կողմից, էլ. շարժիչի և պումպի կենտրոնաբերում
102	Մոլդովական փողոց	Հոսքաչափի էլ. սնուցման կարգավորում, տեղադրվել է 63A միաֆազ ավտոմատ անջատիչ
103	Ռոստովյան 27	Վնասված մալուխի վերանորոգում,
104	Բեռնակիրներ 85ա	Արտաքին լուսավորության միացման համար 63A ավտոմատ անջատիչի տեղադրում
105	Շնչենկո 1	d=2 1.2BTCP փականի փոխարինում 1հատ, աշխատանքները կատարվել են եռակցումով
106	Եղեգնաձորի ՕԿՁ	Կատարվել է էլ. սնուցման միացում, օգտագործվել է 100գճ/մ մալուխ և 2հատ 63A ավտոմատ անջատիչ
107	Մանանդյան 1/3	d=50մմ փականից ջրի արտահոսքի կանխում
108	Աբովյան պուրակ ՕԿՁ	Արտաքին լուսավորության կարգավորում
109	Արտաշիայան 60	d=50մմ փականից ջրի արտահոսքի կանխում
110	Բեռնակիրների 85	Օդամղիչ կոմպրեսորի վերանորոգում և 63A եռաֆազ ավտոմատ անջատիչի տեղադրում
111	Բեռնակիրների 85ա	Տեխնիկական արհեստանոցում թվով 2 LED տեսակի 50վտ լուսարձակների տեղադրում
112	Եղբայրության 8	Վնասված մալուխի փոխարինում 4x6մմ ալյումինե 15գճ/մ
113	Ռոստովյան 27	Պումպակայան սնող էլ. մալուխի փոխարինում, օգտագործվել է 85գճ/մ ալյումինե 4x6մմ մալուխ



## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԿԱՆԵՐ

Փետրվարին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել և պատրաստվել են հետագա շահագործման համար:



Ընդհանուր առմամբ աշխատանքներ են կատարվել ավելի քան 100 մեքենա-մեխանիզմի վրա՝ տարբեր ընթացային մասերի փոխարինում նորերով, շարժիչի նորոգում, առջևի և հետևի համակարգերի նորոգում, և այլն: Փոխարինվել են շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ և անտիֆրիզ, անվադողեր և մարտկոցներ:

Կատարված աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, ինչը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները ժամանակին վերացնելու խնդրի լուծմանը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 184, իսկ ՄՏՍՍ-ում՝ 131 պայմանագրային աշխատակից: 01.03.2019 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 266,518, իսկ ՄՏՍՍ-ում՝ 189,286 պայմանագիր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար-2019թ. փետրվար ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	364,201	255,989	70.3
		Իրավաբանական անձ	17,244	10,529	61.1
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	255,910	182,299	71.2
		Իրավաբանական անձ	10,074	6,987	69.4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	620,111	438,288	70.7
		Իրավաբանական անձ	27,318	17,516	64.1

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները փետրվար ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	398,181	301,128	76
		Իրավաբանական անձ	20,280	13,991	69
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	314,589	183,483	58
		Իրավաբանական անձ	12,191	7,585	62
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	712,770	484,611	68
		Իրավաբանական անձ	32,471	21,576	66

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 316 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 261 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի «Շենգալիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 485, իսկ ՄՏՍՍ-ում՝ 819 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2019թ.
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	272	159	18	449
		Իրավաբանական անձ	18	15	3	36
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	481	272	41	794
		Իրավաբանական անձ	14	9	2	25
	Ընդամենը		785	455	64	1,304

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 206,028 մ<sup>3</sup> վերահաշվարկված հատույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2019թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




Փետրվարին ընկերության առևտրային տնօրինությունների կողմից ձևավորած հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Առաջադրանք հազ.մ³	Փաստացի հազ.մ³	Տարբերություն %, հազ.մ³
Երևան	6,334	6,167	-2.63
Մարզեր	2,829	2,874	1.59
Ընդամենը	9,163	9,041	-1.33

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Փետրվար ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1,066,733 մլն դրամ (71 %), իսկ ՄՏՍՏ-ում՝ 428,304 մլն դրամ (29 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը: Ընկերության ձևավորած հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար մլն դրամ	Փետրվար մլն դրամ
Երևան	Առաջադրանք	1,111,564	1,068,993
	Հավաքագրում	961,127	1,066,773
	%	86%	100%
Մարզեր	Առաջադրանք	485,310	528,579
	Հավաքագրում	394,761	428,304
	%	81%	81%
Ընդամենը	Առաջադրանք	1,596,874	1,597,572
	Հավաքագրում	1,355,888	1,495,077
	%	85%	94%

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Փետրվար ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 112 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 7.96 մլն դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 57 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 4.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2019 թ. փետրվարի դրությամբ		Բավարարված		Մերժված		2017-2019 թթ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3,115	401,373,043	2,520	211,411,388	63	5,285,651	3,291	394,951,629	1,209	98,373,681

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 81 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:



Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.03.2019թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում փետրվար ամսվա հասույթ (մլն. դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	3,073.2	1,140.5
Բնակիչ-բաժանորդներ	2,059.9	753.2
Իրավաբանական անձեր	1,013.4	387.3
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2,101.3	486.0
Բնակիչ-բաժանորդներ	1,670.8	355.5
Իրավաբանական անձեր	430.5	130.6
Ընդամենը, այդ թվում	5,174.5	1,626.5
Բնակիչ-բաժանորդներ	3,730.7	1,108.7
Իրավաբանական անձեր	1,443.9	517.9

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՍՍ սպասարկման տարածքում շուրջ 153.1 մլն դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

ՄՏՍՍ մասով հանրապետական բյուջեի պարտքը 01.03.2019թ. դրությամբ կազմում է մոտ 80 մլն դրամ (Պաշտպանության նախարարություն, Ոստիկանություն, ԱԲՆ և այլն), որը կվճարվի մարտ ամսից սկսած:

2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Երևան)



2019 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ԶՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2019 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	389,185	299,792	77	19,760	13,899	71
	Առանց ջրաչափի	8,996	1,336	15	520	3	1
Մարզեր	Ջրաչափով	286,112	181,313	63	11,813	7,094	64
	Առանց ջրաչափի	28,477	2,170	8	378	4	1
Ընդամենը	Ջրաչափով	675,297	481,105	71	31,573	20,993	68
	Առանց ջրաչափի	37,473	3,506	9	898	7	1

Տվյալների բազայում 01.03.2019թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	514,908	274,821	53	22,474	4,650	21
Մարզեր	333,121	84,667	25	13,961	2,328	17
Ընդամենը	848,029	359,488	42	36,435	6,978	19

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 3,625, իսկ մարզերում՝ 1835 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 58, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 477 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	1783	872	48.9
գ.Պռոշյան	2147	402	18.7
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	4887	142	2.9

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Փետրվար ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 4,628, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,832, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 178 և Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 140 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ


Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	116	75,321	13,303,510
Մարզեր	172	58,469	9,519,535
Ընդամենը	288	133,790	22,823,045

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի փետրվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.3 %, որը 0.2 %-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման տարածաշրջանների տնօրինություններում թվով 51 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 10-ն անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները:






Հաշվետու ամսվա ընթացքում խողովակի ներքին ուսումնասիրման տեսախցիկով ուսումնասիրվել է Աշտարակ քաղաքի Կարբիի N2 խորքային հորը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է խորքային հորի ջրի հորիզոնը, որի հիման վրա խորքային հորի համար ընտրվել է համապատասխան տվյալներով պոմպ:



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 689 կՎտ/ժ (0.15 %)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բազային պոմպեր



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքրցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:


Ստորև ներկայացված են փետրվար ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից մի քանիսը.

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Եղբայրության 8	Լարանցում հետագիծն անհայտ է, մալուխի հետագիծը փոխվել է	1075
Ռոստովյան 27	Լարանցում հետագիծն անհայտ է, ապամոնտաժված է, բեռ չի եղել	4
Գուլբեկյան 43	հավելագրում	58
Խաչատրյան 26	հավելագրում	553
Ա. Խաչատրյան 6	հավելագրում	115
Ն. Ադոնցի 9	հավելագրում	874
Մարալիկ ՕԿՁ	հավելագրում	260
Արփի մաս. (Մարալիկ)	հավելագրում	130
Շիրակացի 58	Սխալ է մոտքագրվել	34
Ընդամենը		3,499

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 158 հասցե. թերություններ չեն հայտնաբերվել: Վեց հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնց մասին տեղեկացվել են «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները՝ թերությունները վերացնելու նպատակով, իսկ 2 հասցեում ապամոնտաժվել են լարանցումներ, որոնց հետագծերը հնարավոր չի եղել պարզել:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 52 կՎտ/ժ կամ 0.3 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Էջմիածին*




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 61 կՎտ/ժ կամ 0.2 % անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

*Շիրակ*



● Փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է ամսական 96,639 կՎտ/ժամ կամ 18.55 % (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):


*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*






● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 118,904 կՎտ/ժամ կամ 6.44 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 124,497 կՎտ/ժ կամ 3,09 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Ընկերության կողմից սպառած էլ. էներգիա*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԶԱՄԱԿԱՐԳ

- Տրվել են պլանային և վթարային ջրանջատումներ:
- Տրամադրվել է տեղեկատվություն տարբեր վարչական շրջաններում տեղակայված իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների վերաբերյալ՝ ըստ տեղադրված համապատասխան անուցող պոմպերի և ըստ ջրամատակարարման գոտիների:
  - Գծվել և տրամադրվել է կոյուղագծի գծագիր՝ վերակառուցման նախագծման նպատակով:
  - Կատարվել է ընկերության կողմից սպասարկվող տարածքներում տեղակայված բաժանորդների տեղադիրքերի ճշտում և կողմորում, ինչպես նաև վերլուծություն լոգեր զոնաների և յուրաքանչյուր կետի բարձրության որոշման համար: Այս աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:
  - Ընթացքի մեջ են սեփական և իրավաբանական բաժանորդների խմբավորման և լրացման աշխատանքները (ըստ սպասարկման տարածքի, լոգերի և լոգեր զոնայի, ժամային գրաֆիկի): Կատարվում են նաև լոգերի կոորդինատի և բաժանորդների (ID-ի) կոորդինատների ստացում և խմբավորում՝ ըստ հասցեի:
  - Տրամադրվել է տեղեկատվություն Երևանի և ՀՀ մարզերի ջրագծերի և ջրատարների, կոյուղագծերի երկարությունների վերաբերյալ, ինչպես նաև ցանցում տեղադրված փականների քանակի վերաբերյալ:

- Թարմացվել են ՀՀ-ում տեղադրված լոգերների տեղադիրքերի և լոգերների գոտիների տվյալների վերաբերյալ բազաները:
- Թարմացվել է ՀՀ-ում տեղադրված էլ. լոգերների վերաբերյալ տվյալների բազան: Այս աշխատանքը դեռ ընթացքի մեջ է:
- Ընթացքի մեջ են նաև ծախսաչափերի վերաբերյալ տվյալների բազայի թարմացման աշխատանքները:

### 3.4. ԿԱՐԳԱՎԱՐՄԱՆ ԽՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում կարգավարների խումբը SCADA և LOCATOR համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մնացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:




Ստորև ներկայացվում է տեղեկատվություն 4 խոշոր վթարների մասին:

- Նոր-Նորք վարչական շրջանի 7-րդ զանգվածում գտնվող ծախսաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ զանգված հոսող ջրաքանակը (սովորաբար գիշերային ժամերին կազմում է 25լ/վ) 18 լ/վ է: Այդ մասին տեղեկացվել է «Հյուսիս» ՇՏ-ի աշխատակիցներին, որոնց կողմից պարզվել էր, որ տվյալ ջրատարի ճնշման կարգավորիչը խափանված է: Կարգավորիչը վերանորոգվել է ՇՏ-ի աշխատակիցների կողմից:

Ստորև ներկայացված է 7-րդ զանգվածի ջրաքանակը ֆիքսող ծախսաչափի գրաֆիկական պատկերը:


Նոր Նորքի 7-րդ զանգված



● Լոր-Լորք վարչական շրջանի 3-րդ գանգվածում գտնվող ջրաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ տարածքում ջրատարի միջով հոսող ջրաքանակը կտրուկ ավելացել է 10 լ/վ-ից հասնելով 16 լ/վ-ի: Այդ մասին տեղեկացվել է «Հյուսիս» ՇՏ-ի տեղամասի աշխատակիցներին, ովքեր պարզել են, որ տեղի է ունեցել ջրատարի վթար: Վթարը վերացնելուց հետո վերականգնվել է բնականոն ջրամատակարարումը:

Ստորև ներկայացված է Լոր-Լորք վարչական շրջանի 3-րդ գանգված հոսող ծախսաչափի գրաֆիկական պատկերը:


Լոր Լորքի 3-րդ գանգված



● «Չարենցավան» ՇՏ-ի սպասարկման տարածքում գտնվող «Ալափարս» գյուղի ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ ՕԿՁ-ի էլքի վրա վթար է տեղի ունեցել: Սովորաբար «Ալափարս» պ/կ-ից տվյալ ուղղությամբ պոմպի աշխատանքի ընթացքում ՕԿՁ-ի լցվածության նիշը 1 ժամում բարձրանում էր 5 սմ, իսկ վթարված ժամանակ ՕԿՁ-ի նիշը 1 ժամում նվազում էր 2 սմ-ով: ՕԿՁ-ից մատակարարվող տարածքները չջրազրկելու նպատակով «Ալափարս» պ/կ-ից դեպի այդ ուղղություն մղող պոմպը հավելյալ աշխատում էր ևս 8 ժամ: Այդ մասին տեղեկացվել է «Չարենցավան» ՇՏ-ին: Տեղամասի աշխատակիցների կողմից հայտնաբերվել էր վթարի ստույգ վայրը, որից հետո հայտարարվել էր վթարային ջրանջատում: Վթարվել էր D=160 մմ պոլիէթիլենային խողովակը, որի վերանորոգումից հետո ջրամատակարարումը վերականգնվել էր: «Ալափարս» պ/կ-ից դեպի գյուղ Ալափարսի ՕԿՁ ուղղությամբ պոմպը նախկինի պես շահագործվում է օրական 14 ժամ:

Ստորև ներկայացված է գյուղ Ալափարսի ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը:


Ալափարս ՕԿՁ



● Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ ՕԿՁ-ից դուրս եկող ջրատարը վթարվել է: «Ֆանտան»-ի պ/կ-ից, երբ ջուրը պոմպի առավելագույն հզորությամբ մղվում է դեպի տվյալ ՕԿՁ, ջրամբարի լցվածության նիշը ցերեկային ժամերին ճնշում է անփոփոխ, իսկ գիշերվա ընթացքում լցվում է ժամում 13 սմ: Վթարը տեղի էր ունեցել գիշերվա ընթացքում, քանի որ ամբարի ժամում 13 սմ լցվելու փոխարեն, լցվածության նիշը սկսել է ժամում 15 սմ կտրուկ նվազել: Այդ մասին տեղեկացվել է «Չարենցավան» ՇՏ-ի աշխատակիցներին: Նրանք հաջորդ օրը հայտնաբերել են վթարի ստույգ վայրը, որից հետո ՕԿՁ-ից դուրս եկող ջրատարը ջրազրկվել է, որպեսզի չխոչընդոտի վթարավերականգնողական աշխատանքների ընթացքին: Աշխատանքներն ավարտելուց հետո բնականոն ջրամատակարարումը վերականգնվել է:

Ստորև ներկայացված է Ֆանտան ՕԿՁ-ի մակարդակաչափից ստացված տվյալների գրաֆիկական պատկերը.

Ֆանտան ՕԿՁ



3.5. ԶՐԱՏԱՐ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ

Գառնի-Երասխ

- Գառնի-Երասխ ջրատարի վրա կատարված ուսումնասիրության արդյունքում Արարատ քաղաքում և դրա հարակից շրջանում հայտնաբերվել է 4 վթար՝ գումարային արտահոսքը մոտ 3 լ/վ:
- Վերոնշյալ վայրում հայտնաբերվել է նաև մեկ ապօրինի միացում:



● Վեղի քաղաքում և դրա շրջակայքում հայտնաբերվել է 4 վթար գումարային արտահոսքը  $\approx 11$  լ/վ: Վեղիի սկզբնամասում հայտնաբերված վթարն ամենախոշորն է, և դրա արտահոսքը կազմում է 9 լ/վ:



● Եվս երկու վթար է հայտնաբերվել Գոռավան գյուղ գնացող ջրագծի միացման կետում: Դրանք անմիջապես վերացվել են:



### Ղազարավան-Բազմաղբյուր

● Ղազարավան-Բազմաղբյուր ջրատարներ կատարած շրջայցի ժամանակ հայտնաբերվել են ապօրինի միացումներ և վթարներ, որոնց մասին տեղեկացվել են առևտրային և շահագործման տեղամասերի աշխատակիցները: Վերջիններիս կողմից իրականացվել են համապատասխան աշխատանքներ:



● Ուսումնասիրվել է Ղազարավանի խորքային հորերի ջրատարը, որի ճնշումը բարձրացնելու և որոշակի աշխատանքներ կատարելու շնորհիվ նպատակադրված է շահագործումից հանել Ագարակի պոմպակայանը: Ճնշումը բարձրացնելու համար պետք է փակվեր Ագարակ գյուղի մոտ գտնվող գծային փականը, սակայն այն գտնվում էր վթարված վիճակում, որը խանգարեց ջրատարում ճնշումը բարձրացնելուն: Փականը փոխարինելուց հետո աշխատանքները կշարունակվեն:



## Արզական



● Մասիս քաղաքի ջրամատակարարումը բարելավելու և Արարատյան 1-ին և 2-րդ պ/կ-ի պոմպի աշխատանքը դադարեցնելու համար (օրական այն աշխատում էր մոտավորապես 5 ժամ և մղում էր Մասիսի Խարբերդ ՕԿՁ) Արզական ջրատարից ջրաքանակն ավելացվել և ուղղվել է Մասիս քաղաք: Այժմ Արարատյան պ/կ-ն աշխատում է 2.5 ժամ, որի շնորհիվ տնտեսվել է ավելի քան 1020 կՎտ էլ. էներգիա: Ամսվա կտրվածքով այդ տնտեսումը կազմել է 31,000 կՎտ էլ. էներգիա: Հնարավոր է եղել Մասիսի Խարբերդի ՕԿՁ-ից ջրաքանակի ելքը նվազեցնել, սակայն քաղաքի ցանցում ճնշումները դեռ բարձր են: Գոտիավորման որոշակի աշխատանքներ կատարելուց հետո արդեն նպատակահարմար կլինի ջրամատակարարումն այդ կերպ կազմակերպել:

**Լոռի-Բերդ** ջրատար համակարգի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է թվով 2 գաղտնի վթար՝ գումարային 35 լ/վ ջրաքանակով, որից 25 լ/վ-ը վերացվել է օպերատիվ կարգով, այնուհետ վերացվել է նաև ջրթող փականի բացակայության պատճառով առաջացած 10 լ/վ-ի չափով արտահոսքը: Բացի վերոնշյալ գաղտնի վթարից նույն հատվածում առկա էր թվով 2 մեծ վթար (գումարային 30 լ/վ): Վերոնշյալ խնդիրը կարգավորվել է փոխարինելով խափանված 200 մմ տրամագծով (25 մթն.) ջրթող փականը:

Այս բոլոր վթարները վերացնելուց հետո Լոռի-Բերդ համակարգից ջրառը պակասեցվել է մոտ 75 լ/վ-ով:

**Հեր-Հերի** ջրաղբյուրից դեպի Վայք քաղաք ջրաքանակը նվազեցվել է 40 լ/վ-ով Բլորի և մաքրման կայանների ծառայության աշխատակիցների կարգաբերած փականի շնորհիվ:

**Ագարակ գյուղի ՕԿՁ-ի** վրա ճնշման լոգեր է տեղադրվել, որից ստացված տվյալներից հասկացվել է, որ ՕԿՁ-ում ջրթափ է տեղի ունենում, որից ելնելով մաքրման կայանից ջրաքանակը նվազեցվել է 4 լ/վ-ով:

**Մեղրիի ՕԿՁ-ից** ստացված տվյալներից պարզվել է, որ այնտեղ ջրթափ է տեղի ունենում: Այստեղ ջրաքանակը նվազեցվել է 5 լ/վ-ով:

**Ստեփանավան.** ա.թ. փետրվարի 21-26-ն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրություններ են կատարվել Ստեփանավան տեղամասի սպասարկման տակ գտնվող ջրատար համակարգերի ամբողջ տիրույթում:


- Ուսումնասիրությունները կազմակերպվել են չորս տարբեր ուղղություններով.
- ▶ Գետավանի պ/կ-ից դեպի գյուղեր գնացող ջրատար (Ուռուտ և Կողես ուղղություններ),
  - ▶ Oxfam կոնֆեդերացիայի ծրագրի շրջանակներում կառուցված պ/կ-ից դեպի թիվ 1 ՕԿՁ-ների խումբ (2x1000մ<sup>3</sup>) և թիվ 2 ՕԿՁ-ների խումբ (2x400մ<sup>3</sup>) ուղղությամբ,
  - ▶ «Նովոսելցովո» ջրաղբյուրներից սնվող ինքնահոս համակարգերից դեպի Լոռի-Բերդ համայնք,
  - ▶ Ռումինական թաղամասը սնող ջրատար:

Ուսումնասիրությունների արդյունքում Ստեփանավան քաղաքի ներսում իրարից տարանջատվել են «Նովոսելցովո»-ի ինքնահոս աղբյուրներից և Գետավանի պոմպակայանից սնվող ջրատարները, որոնց կարգավորումներից հետո Գետավանի պ/կ-ի էլ. էներգիայի ծախսը 2100 կՎտ-ից նվազել է մինչև 1400 կՎտ: Գետավանի պ/կ-ից սնվող Ուռուտ համայնքի ջրատարի վրա հայտնաբերվել և խցափակվել է մոտ 5 լ/վ արտահոսքով վթար:

Ստեփանավան քաղաքի ներսում գտնվող 2x400 մ<sup>3</sup> ծավալ ունեցող ՕԿՁ-ի գերհոսքի և Oxfam-ի պ/կ-ի գրաֆիկների կարգավորումներից հետո 37կՎտ հզորությամբ wilo մակնիշի պոմպի ծախսը նվազել է մինչև 20կՎտ և արդյունքում տնտեսվել է 17կՎտ էլէներգիա: Պոմպակայանի նվազեցված ծախսը ուղղվել է ջրամատակարարման

Ժամային գրաֆիկի ավելացմանը՝ նախկին 7 ժամյա գրաֆիկը հասցնելով առնվազն 17 ժամի:

Ռումինական թաղամասի ջրամատակարարման ժամային գրաֆիկը 12 ժամից հասցվել է 24 ժամի: Գիշերային լոգեր-ծախսաչափի տեղադրման արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ նշված թաղամասում առկա է վթար 15 լ/վ արտահոսքով (վթարավերականգնողական աշխատանքները դեռ շարունակվում են):




Վերոնշյալ բոլոր աշխատանքների կատարման արդյունքում տեղի է ունեցել 25 լ/վ ջրաքանակի տնտեսում, որը կազմում է Ստեփանավանի ենթատեղամասի կողմից վերցվող համընդհանուր ջրաքանակի ավելի քան 15%-ը:



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**







### 4.1. Համակարգչային ցանց

Փետրվար ամսվա ընթացքում համակարգչային ծառայության կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝


- Վեոլիա Խմբի գլխավոր գրասենյակի IT անվտանգության հարցման շրջանակներում տրամադրվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի դոմենում առկա օգտատերերի քանակների մասին հաշվետվություն:
- Մասնակցություն է ցուցաբերվել “Amazon AppStream” ծրագրային ապահովման ներկայացմանը, որը իրականացվում էր Վեոլիա Խմբի գլխավոր գրասենյակի SS պատասխանատուների կողմից:
- VD-FILESERVER01 ֆայլային սերվերը տեղափոխվել է նոր սերվերների վրա:
- Պատրաստվել է 1-85 նոր ծրագրային ապահովման համար տեխնիկական առաջադրանք:
- Իրականացվել է բոլոր Linux օպերացիոն համակարգերով գործող սերվերների թարմացում:
- Չանախչի, Գեղի, Ջվար և Ագարակ ՋՄԿ-ներում կատարվող աշխատանքների առավել արդյունավետություն ապահովելու համար իրականացվել են տեսահսկման համակարգերի տեղադրման տեղազննության աշխատանքներ:
- Հաշվարկվել և գլխավոր տնօրինություն է ներկայացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ SS միջավայրի արդիակացմանն ուղղված պահանջվող սերվերային հզորությունների, նոր համակարգիչների, տպող տեխնիկայի և Մայքրոսոֆթ արտոնագրերի ցանկը:

### 4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ ինտերակտիվ և փաստաթղթաշրջանառության համակարգերում:
- Տեխնիկական տնօրինության ռազմավարության եւ մշտադիտարկման վարչության ԱՏՀ խմբի հետ համատեղ մշակվում և ստեղծվում է տվյալների բազա՝ ջրամատակարարման շարունակականությունը հաշվարկելու համար:
- Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի հետ կնքված նոր կարգի համապատասխան, կատարվել է ամբողջական ծրագրային փոփոխություն, որով հնարավորություն է ընձեռվում ջրաչափերի լաբորատոր եզրակացությունները ստանալ և հաշվարկել նոր հաստատված կարգով:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՌ կոմիտեին, ՀԾԿՀ և ընկերության այլ ստորաբաժանումներին:

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Փետրվարին Հանրային կապերի ծառայությունը (ՀԿԾ) ակտիվորեն մասնակցել է ընկերության առջև դրված խնդիրների կատարմանը: Դա մի կողմից վերաբերել է ընկերության մյուս տնօրինություններին ու ծառայություններին աջակցելուն, մյուսից ՀԿԾ-ի գուտ ՋԼՄ-ների ու հանրության հետ տարվող աշխատանքին առնչվող խնդիրներին:

Ընդ որում, առաջնային նշանակություն է ունեցել հանրության վրա ազդեցության տեսակետից ամենակարևոր՝ հեռուստաալիքների հետ աշխատանքը, թե հանրությանը հուզող հարցերին պատասխանելու և թե նրանց միջոցով ընկերության խնդիրների մասին բարձրաձայնելու նպատակով:



Այսպես, Հանրային հեռուստաալիքի Լուրեր լրատվական ծրագիրն անդրադարձել է Վեոլիա Ջրի գործունեությանը, որից օգտվելով հանրության առջև ելույթ է ունեցել ընկերության նորանշանակ գլխավոր տնօրեն Գոռ Գրիգորյանը: Վերջինս նորովի է ներկայացրել Վեոլիան, պատմել է իր առաջիկա ծրագրերի, այդ թվում ջրաչափերի փոխարինման ու քլորակայանների արդիականացման, ՕԿՋ-ների կառուցման մասին: Այս ամենի շնորհիվ ստացվել է շահեկան հաղորդում, որով Վեոլիան փաստորեն ռեբրենդինգի հայտ է ներկայացրել հանրությանը ու ստացել վստահության որոշակի վարկ 2019թ. համար:

Շատ կարևոր խնդրի՝ ջրագծերի ու կոյուղագծերի վրա տարաբնույթ ապօրինի շինությունների առկայության հարցը ՀԿԾ-ն կարողացավ բարձրացնել, օգտվելով այն հանգամանքից, որ Ջովուսի ավանում նման դեպք է գրանցվել, որը հանրության դժգոհությունն է հարուցել: Ավելին, համապատասխան հանրային հնչեղություն ապահովելու համար միանգամից 3՝ ATV, 22 ու Կենտրոն հեռուստաալիքներով լուսաբանվեց խնդիրը: Նաև համապատասխան մամուլի հաղորդագրություն՝ լուսանկարներով հանդերձ ուղարկվեց ՋԼՄ-ներին, այդ թվում մեզ հետ համագործակցող թերթերին, ու հրապարակվեց ընկերության ֆեյսբուքյան էջում: Այսպիսով ստացվեց զգալի «Տեղեկատվական հարված», որի արդյունավետությունն ակնհայտ է:



Եվս մեկ հեռուստահաղորդում պատրաստվեց Երկիր Մեդիա ալիքով, որին մասնակցած Վեոլիա Ջրի պատասխանատուները պարզաբանեցին Արարատի մարզում առկա ջրամատակարարման խնդիրները: Հրնթացս վերջիններս իրենց հերթին հանրության առջև բարձրացրեցին արդեն Վեոլիա ջրին հուզող հարցեր:



Ինչ վերաբերում է ընկերության համակարգում տարվող ամենօրյա աշխատանքներին, ապա հանրությանը շարունակաբար ներկայացվել են ջրամատակարարման բարելավմանն ուղղված աշխատանքները հանրապետության մի շարք բնակավայրերում, այդ թվում՝ Ապարան, Կապան, Վայք, Սպիտակ, Արտաշատ, Գյումրի ու Երևան քաղաքներում: Նույն նպատակն է հետապնդել Վեոլիայի պատասխանատուների հանդիպումը Գյումրիում, որտեղ մարզպետի հետ քննարկվել է ջրամատակարարման խնդիրը Շիրակի մարզում և փնտրվել դրանց լուծման ուղիները: Հասարակական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքը նույնպես լուսաբանվել է մեր ֆեյսբուքյան էջում: Մասնավորապես, խոսքը ԲԿԱՍ ՀԿ-ի հետ ջրաչափերի տեղադրության ու աշխատանքի համատեղ ստուգման մասին է էջմիածնի տարածաշրջանում:

Ընդ որում, այս ընթացքում օգտագործվել են բոլոր հնարավորություններն ամենահասարակ հարցերն ու ամենօրյա տեղեկատվությունը հանրությանը առավել հետաքրքիր ու գրավիչ ներկայացնելու համար: Այսպես, ջրանջատումների մասին մամուլի հաղորդագրությունները տեղադրվել են ֆեյսբուքյան էջում բազմազույն ու ձևավորված աչք գրավելու ու ընթերցողների քանակն ավելացնելու համար: Հնարավորության դեպքում, դրանք հանրությանը ներկայացվել են տեսանյութի ձևով, ինչպես օրինակ Վանաձոր-Ալավերդի մայրուղուն հարակից խոշոր ջրատարի վթարի դեպքում:



Պաշտպանելով Վեոլիա ջրի շահերն ու գործարար համբավը, հաշվետու ժամանակամիջոցում 2 հերթում է հրապարակվել ՁԼՄ-ներում՝ [newslive.am](http://newslive.am) հարթակի ու «Վեոլիա Ջրի հանրային վերահսկողություն» կոչվող ֆեյսբուքյան խմբի վարկաբեկիչ ու սադրիչ հրապարակումների վերաբերյալ:

Բնականաբար, հաշվետու ժամանակաշրջանում նաև շարունակվել է աշխատանքը Վեոլիա Ջրի պաշտոնական կայքը սպասարկելու, ՁԼՄ-ներից ու քաղաքացիներից ստացվող բողոք-առաջարկություններին արձագանքելու, համակարգում տարվող այլ աշխատանքները ՁԼՄ-ների միջոցով հանրությանը ներկայացնելու ուղղությամբ Վեոլիա Ջրի նկատմամբ հանիրավի քննադատությունը կանխելու, ինչպես նաև վերջինիս աշխատանքը հնարավորինս լիարժեք հանրությանը ներկայացնելու համար:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





### 6.1 Փաստաթղթերի մշակում

● «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում «ԴԱՄԻ» տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ-ի փորձագետների կողմից իրականացվեց Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 23 արտադրական վտանգավոր օբյեկտի (18 ամբարձիչ սարքավորում, 2 քլորակայան, 3 կաթսայատուն) տեխնիկական անվտանգության վկայագրերի փորձաքննություն և տրամադրվեց դրական եզրակացություն:



### 6.2 Դասընթացներ/սեմինարներ

● Կազմակերպվեց և իրականացվեց թվով 60 աշխատակիցների՝ բաժանորդների սպասարկման գրասենյակների աշխատակիցների, «1-85» հեռախոսակենտրոնի օպերատորների և ՄՍՍ Տնօրինության հաշվետար-օպերատորների մասնագիտական գիտելիքների և հմտությունների թեստավորում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոնների, խմելու ջրի որակի հսկողության պահանջների, ջրամատակարարման ցանցերի շահագործման վերաբերյալ, Վարձակալության Պայմանագրի և հաղորդակցության հմտությունների վերաբերյալ գիտելիքների ստուգման և գնահատման նպատակով:



● Հաշվետու ամսում Ֆրանս հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում շարունակվեցին Ընկերության ԵՏՍՏ Տնօրինության 40 մասնագետ տեսուչի և «Արևելք» ու «Արևմուտք»

տարածաշրջանային տնօրինությունների ինժեներա-տեխնիկական անձնակազմի 37 աշխատակիցների մասնագիտական դրակավորման դասընթացները:

Դասընթացների նպատակն է բարձարցնել Ընկերության վերոնշյալ մասնագիտությունների աշխատակիցների կատարողականության մակարդակը, ամրապնդել վերջիններիս շրջանում ան-

վտանգության մշակույթը: Դասընթացների մասնակիցներն ուսուցանվում են առաջին օգնություն, անվտանգության ապահովումը աշխատանքային պարտականությունները կատարելիս թեմաներով:



● Դասընթացների շրջանակներում ինժեներա-տեխնիկական անձնակազմի համար իրականացվեցին գործնական պարապմունքներ Վեոլիա Գրուպի Լիոնի ուսկենտրոնի դասընթացավար/փորձագետ պրն. Էրիկ Մոնտարիոյի մասնակցությամբ: Պարապմունքների ընթացքում դասընթացավարները և խմբակային կողմից տրամադրված սխեմաների հիման վրա մասնագիտական խմբերը իրականացրեցին վթարավերականգնողական տարբեր իրավիճակներում ցանցում առաջացող հնարավոր աշխատանքների սցենարներ:



### 6.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում

● Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին պլանավորված Անվտանգության ստուգայցներ Տեխնիկական տնօրինության թվով 9 քլորակայանում («Ապարան», «Արարատյան 1-2», «Արզական», «Ձորաղբյուր», «Եզնակ», «Գառնի», «Կաթնաղբյուր», «Օարավաղբյուր», «Մարալիկի»), թվով 2 պոմպակայանում («Գյումուշ», «Արարատյան 1-2»), մեկ ՕԿՋ-ում («Մայիսյան ՕԿՋ»), Արևելք տարածաշրջանային տնօրինության «Նորաբաց» պոմպակայանում: Կատարված Ստուգայցների արդյունքները գրանցվեցին հատուկ ստուգաթերթիկներում:

● ՈԱՍ Ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա  
E-mail: info@vjur.am

